

## ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՀՈԴԽՈՐԱԿԱՆ ՎԱՐՈՒՅ ՅՈՎԱՍԱՓՈՒ ՈՐԴԻՌԸ  
ԹԱԴԱՌՈՐԻՆ ՀՆԴԿԱՑ, գրեալ Յոհաննու Կրանաւորի, Աշխատա-  
սիրեց Մեորոպ գ. Տէր-Մովսէսեան, Վաղարշապատ 1898.

Այս աշխատութեան վերնագի-  
րը արտադրելիս, ակամայ լիշեցի-  
պրոֆ. Տրաչևակու խօսքերը, որ՝  
Օդեսալի համալսարանի ուսուց-  
չափեա եղած ժամանակ առել է  
ալտանզի հայ ուսանողներից մէ-  
կին, ոչայ և վրացի ապագալ գիտ-  
ականների պարտականութիւնն է  
ուսումնականի զրակա-  
նութիւնը և անցեալը. չը որ միջ-  
նադարեան բազմութիւ հեքեաթ-  
ներն ու հոգեոր վէպերը անցել  
են Փոքր Ասիալով կամ ձեր եր-  
կրով գէտի Յունատառան, իսկ ար-  
ակիցից լատինական աշխարհը և  
սլաւոնական ու գերմանական ազ-  
գերի մէջ, Ո՞րքան պիտի օգտուի  
գիտութիւնը, երբ որոշուին այն  
ճանապարհները, որոնցով ալդ վէ-  
պերն ու հեքեաթները անցել են  
Արևելքից Աւրոպա։ Այսպիսի շըր-  
ջիկ վէպերի շարքին է պատկա-  
նում ներկալ ոչոգեորական վար-

քը, որ նկարագրում է հնդկաց-  
թագաւորի Յովասափ որդու հեթա-  
նոսութիւնից քրիստոնեալ դառ-  
նալը Բարդամ ճգնաւորի ձեռքով  
Հնդկաց հեթանոս թագաւորը եր-  
կար ժամանակ որդի չէ ունենում,  
բայց վերջապէ նրան մի զաւակ  
է ծնուռմ, որի մասին աստղաբաշ-  
խները և զիտնականները գուշա-  
կում են, թէ երեելի է լինելու  
ճշմարտութեան գուտով և դառ-  
նալու է քրիստոնեալ Հայրը սկը-  
սում է հալածել բոլոր հաւատա-  
ցեալներին և երկրալին վշտերից  
ու ասրակուսանքներից որդուն  
հեռու պահելու համար դաստիա-  
րակում է նրան մի առանձնացած  
պալատում, մարգկալին հասրա-  
կութիւնից կտրուած։ Բայց չափա-  
հաս է դառնում Յովասափը և ար-  
թնացած զիտակցութիւնը դուրս է  
մղում նրան ալդ արգելարանից,  
նա համոզում է իւր հօրը թուլ

-տալու իրան դուրս ելնել և իւր  
-շրջագալութեան ժամանակ մի օր  
պատահում է մի ուրուկի և կոր-  
քի, մը ուրիշ օր՝ մի ծերունու և  
առաջին անգամ իմանում է որ  
աշխարհիս երեսին ցաւ կալ, ծե-  
րութիւն կալ, մահ կալ և ահա  
դառն է երեսում նրան ժամանակը;  
ստուեր ու ունաշն կեանքը և կա-  
մենում է սովորել մահուան մա-  
սին, թէ թնչ է լինում մարզը  
մահից լեռով, և մաշում էր  
իւր հոգու մէջ. Ալդ միջոցին ա-  
նապատից գալիս է Բարզամ ճշգ-  
նաւորը և զգեստները փոխած,  
երեսում է նրան մարգարիտ վա-  
ճառելու պատրուակով. Ալդ մար-  
գարիտը քրիստոնէական ուսմուն-  
քըն է, որ նա բացատրում է Յո-  
վավասափին առակներով և քարզ-  
ներով. Բարզամը վերջը մկրտում  
է արքալորդոն և հեռանում Հալ-  
լը իմանում է որ իւր որդին քը-  
րիստոնեալ է զառել, զիմում է  
հեթանոս քարոզիչների և կախար-  
դի օգնութեանը, բայց ոչ վիճա-  
բանութիւններն են օգնում, ոչ էլ  
ուրիշ հնարները, քարոզիչներն ու  
կախարդը իրանք քրիստոնէու-  
թիւն են ընդունում. Այն ժամա-  
նակ թագաւորը տեսնում է որ  
անկարելի է Յովավասափին իւր հա-  
ւատից հանել, տալիս է նրան իւր  
թագաւորութեան մի մասը. և այս-  
ուղ սկսում է ծագկել քրիստո-  
նէութիւնը, ալնապէս որ առջ բա-  
ւէին քանանալք ի մկրտելու. Յո-  
վավասափի թագաւորութիւնը արագ  
քարգաւաճում է, ալս տեսնելով,  
հայրը ճանաչում է ճշմարտութիւ-

նը և ինքն ևս ընդունում է քրիս-  
տոնէութիւնը և ապա երկուսով  
սկսում են եկեղեցիներ շինել. փա-  
խած եպիսկոպոսներն ու քահա-  
նաներն ստանում են իրանց վի-  
ճակները. Այնուհետև հայրն թող-  
նում է թագաւորութիւնը որդուն,  
և ինքը ապաշխարում է. Հօր՝ Ա-  
քենների մահից լեռոյ Յովավասափը  
իւր գանը լանձնում է Բարզաքիա-  
սին, հագնում է մազեղէն հան-  
գերձը, գնում է անապատ և զըս-  
նելով Բարզամին, ճգնում է ա-  
նապատում. Բարզամի մահից լի-  
տոլ, Յովավասափը ալլ ևս մի քանի  
տասնեակ տարի ապրում է. Նրը  
Բարզաքիասը իմանում է, որ վախ-  
ճանուել են Բարզամն ու Յովա-  
վասափը, ուղարկում է քահանապա-  
պետներին ու իշխաններին և իւր  
թագաւորութիւնն է տեղափոխում  
սուրբերի անապական մարմիննե-  
րը ու թաղում է Աքեններ արքալի  
կողքին. Այս զալ ամենալի համե-  
նուաստ ի կրանաւորս Յովիան-  
էս, երթեալ ի Հնդիկս տեսի զգե-  
րեզմանս նոցա և երկրպագեցի նըշ-  
խարաց նոցա և արհնեցի զպար-  
գուզս ինձ զաւրութիւն հասանել  
ի տեղի հանգստեան սրբոցն.

Յովավասափի և Բարզամի ալս  
պատմութիւնը ոչ ալլ ինչ է, եթէ  
ոչ Բուզդհալի կեանքը նկարա-  
գրութիւն քրիստոնէական ոգով.  
Ոչպէս հնում շատ էր տարածուած  
ամբողջ քրիստոնէական աշխար-  
հում, նոյն իսկ փոխարդուել է  
արքարելն և երրալցերէն, լար-  
մարեցնուելով առաջնում մահմե-  
դական, երկրորդում մովսիսական

աշխարհականացողութեանը։ Վարդը ունէր ընդարձակ ընթերցող հասարակութիւն և սիրելի էր իւր պարզ, բայց հոգեբանորդէն խոր մտածուած նիւթով, իւր հրաշալի առակներով, որոնք զարմանալի հետաքրքրութիւն են տալիս ամբողջ պատմութեանը, չը նայելով սրա երկար ու բարակ դաւանաբանական բազադրութիւններին։

Մինչև արօր զանազան լեզուներով գտնուած հարիւրաւոր օրինակները, պատմութեան զվասաւոր կետերով նման լինելով, ունին նաև ալնապիսի ընորոշ տարբերութիւններ, որ ստիպում են ընդունել մի քանի առանձին խմբագրութիւններ, Յոյց տալ արդ խմբագրութիւնները, դրանց վիճակարձ կազզը, կազմելու ժամանակը—արդ նշանակում է պարզել այն գրական լարաբերութիւնները, և այն քաղաքակրթական աղջեցութիւնները, որ միշին դարերում ունեին զանազան առգերը իրար վրալ, Առհասարակ ընդունում են, որ վէպի նախատիպը դրաւել է քրիստոնեալի ձեռքով պեհուուի լեզուով Արմենիան իրանում, ուր իրար հետ շփուում էին քրիստոնէութիւնը, զրադաշտական կրակապաշտութիւնն ու բուդհականութիւնը, որ ստորդհականութիւնը, Այս հին օրինակից ծագել են մի կոզմից արաբերէն մահմանական վերսիան, իսկ միւս կողմից հին լունարէն կամ ասորերէն քրիստոնէական վերսիան։ Վրացերէն վերսիան աւելի նման է արաբերէնին, ինչպէս և երազեցերէն—մովսիսականը (Hommel),

իսկ լունարէն—ասորերէնից ծառ գել են լունարէնը, արաբերէն—քրիստոնէականը (սրանից եթովդ պերէնը), հայերէնը, լատիներէնը (սրանից գերմաներէնը) և ուսուներէնը։ Բայց այս կապերը առայժմ միայն ընդհանուր գծերով են հաստատուած։ Օրինակ, գեռչէ պարզուած ասորերէնի և ուրիշ վերսիաների, մանաւանդ վրացերէնի լարաբերութիւնները, նոյնապէս հիմք կատ կարծելու որ վրացերէնից ես եղել է թարգմանութիւն լունարէն (Եթիւմիոս իբերացի), Նոր գտնուած վերսիաները, նաև հների աւելի մերձաւոր ուսումնասիրութիւնը հնարաւորութիւն պիտի տալ աւելի լուս սփառելու արև գրականական լարաբերութիւնների վրալ։ Այս պատճառով չէ կարելի չողջունել հայերէն նոր վերսալի հրատարակութիւնը, որ ներկալ թուին լուս է ընծափել Էջմիածնի միաբան հ։ Մեսրոպ վարդապետ Տէր Մովսէսեանը, կցելով մի առաջարան Յովանափառի վարքի արդ նոր օրինակի մասին և վերջում հաստուածներ Յալմաւուրքի մէջ պատահող նորն ստորի համառուս վարքից և Առաքել Բաղրիշեցու տաղաչափ քաննք ի վերալ Յովանափու։

Մինչև վերջին ժամանակներս լաբանի էր գերմանական այլսարձին հայերէն վէպի միայն մի համառուս բնագիրը, որը ընդհանրապէս նանաշուած էր իրքն ուղղակի թարգմանութիւն լունարէնից։ Աւելը հ։ Տէր Մովսէսեանը ահա զբարձրէն—մովսիսականը (Hommel),

թի մէջ (թիւ 634, ժողովածուների կարգով 71-րդ) ալդ պատմութեան ընդարձակ օրինակը, որը արտագրուած է 1322 թ.: Աշխատասիրող հալրը փորձում է լւր առաջանի մէջ ցոլց տալ՝ ինչ յարքերութիւն կալ ալդ ընդարձակ և նախկին համառօտ օրինակների մէջ, նաև դրանց և լունարէն վերսէալի մէջ, Դիբազդաբար նա իւր ձեռքի տակ ունեցել է լունարէնի ոչ թէ Boissone de-h Anecdota graeca IV ։ 1832 թ. լիակատար հրատարակութիւնը Migne, Patrologiae cursus completus, series graeca, XCVI t. 1860 թ., ալլ միան այն հասուածները, որ բերուած են Zotenberg-ի «Notice sur le livre de Barlaam et Joasaphus quærit վերջում: Աս պատճառով նրա եզրափակութիւնները հալերէնի և լունարէնի մասին պէտք է զգութեանը ընդունել:

Համառօտ հալերէնի մասին  
4. Տէր Մովսէսեանը այն կարծիքի է, որ նա կազմուած է Ճ-Շ-Ռ-Դ դարերում, գոյցէ աւելի շուտ, ամենայն դէպս ոչ ուշ: Ալսատ անունով մէկը Բագրատունի մի պատուառը իշխանի հրամանով հալերէն ընդարձակ Բարդամու վէպից ծալրաքաղ օրինակ է կազմել, որը Ճ-Ռ-Դ դարու սկզբում մտել է Յարսմաւուրքների մէջ և Առաքել Բազիշեցու ձեռքով 1434 թ. ոտանաւորի վերածուել, իսկ մինչ ալդ նա ընթացքի մէջ էր Ուկիփորիկ և նման ժողովածու ձեռագրերի մէջ: Բայց համառօ-

տի մէջ կան մասեր, որոնք տարբերում են նրան ընդարձակից: այն է բատուկ անուններ մի փոքր առանձին ուղղագրութիւն և աւելի նախաղասութիւններ, նոյն իսկ ամբողջ պարբերութիւններ (որոնցից մէկը երկու երես է): Այս բաւելուածների բնաւորութիւնը այնպէս է, որ ։ Տէր Մովսէսեանը չէ վատահանում անդել, սթէ նոքա համառօտողի մտքի արդիւնք են, ալլ մնձաւ մասամբ սկզբնականի տպաւորութիւն են թողնում: Այս պատճառով նապէտք է ընդունէր, կամ համառօտիչը ունեցել է բացի մեր ներ, կալ ընդարձակ օրինակից, ալլ ես մի ուրիշ ազգիւր, կամ որ մեր ձեռքը հասած ընդարձակից ալդ մասերը կորել են, վերջին ենթադրութիւնը նա աւելի հաւատական է համարում (61 երես), այնպէս որ ենթազրում է, որ հնում եղել է հալերէն աւելի լրացած վերսիա, քան թէ ներկալ իւր գտածը:

Հետաքրքրականն այն է, որ Վարդան վարդապետի (†1271) ընդհանուր աշխարհազրութեան համառօտ ձեռնարկի մէջ լիշտակւում է, ինչպէս ցոլց տուեց պ. Մառը, Բարդամի վարքը իրրեն հանրածանօթ մի վէտ բազդատութիւնից երեսում է, որ, հաւանականորէն, ալս աշխարհազրութեան կազմողը՝ Վարդան վարդապետն է եղել թէ նրա աշակերտը—օգտուել է վարքի համառօտ օրինակից:

Գալով ընդարձակ օրինակին,  
5. Տէր Մովսէսեանը աշխատում է

հաստատել, որ սա թարգմանուել է բանարէնից, բայց սրա բնագիրը Boissonade-ի հրատարակած բնագիրը չէ, այլ մի ուրիշը, որը կորել է և որը հայ թարգմանչի ձեռքով դիտամար կրնառուել է կամ չէ ունեցել հալերէնում պակասող մասերը։ Բայց որ օրինակն է աւելի հինգ Boissonade-ինը թէ արդ կորածը, այս հարցը հ. Տէր Մովսիսիանը հնար չէ ունեցել քննելու, որովհետև սրա համար անհրաժեշտ է համեմատել ընդարձակ հալերէնը Boissonade-ի ամբողջ բնագրի հետ, որից զրկուած է եղել աշխատասիրողը։

Անկառիկած այս նոր հրատարակութիւնը շատ կը նպաստէ Յովանափի վէպի և առհասարակ մեր հոգեոր պատմութիւնների ուսումնասիրութեանը, ինչպէս և նոյն Տէր Մովսէսիանի Սովորատի հրատարակութիւնը արդէն մեծ զարկ է տուել օրինակ Խորենացու հար-

ցի քննութեանը։ Եթէ հետազօտութեան մէջ նկատում են մի քանի թերի կողմեր, չը պարզուած խնդիրներ, պատճառն ուղղակի այն է, որ հ. աշխատասիրողը աշխատել է կէմիածնի մէջ, ուր ձեռքի տակ պակասում են, դիտական անհրաժեշտ հրատարակութիւնները։ Յանկաչի կլինէր որ զանազան վեր օիանների լարաբերութիւնները որոշելուն հետ զուգընթացարար հետազօտուէր նաև այն, թէ որ չափ ազգել է արդ վէպի բովանդակութիւնը մեր բանառը ժողովրդական գրականութեան վրալ։ Անկառիկած, զանազան հեքեաթների և վէպերի մէջ մոտած են վէպի մըր կամ այն մատերը, մանաւանդ առակինները։ Դրա լու ապացուցը այն է, որ ալմանակ Բուկովինալի և Զիբընըսուրպի հալերի, նոյն իսկ զնչուների հեքեաթների մէջ պատահում են արդ վէպի ազգեցութեան հետքեր։

Մտ. Լիսիցեանց.

